Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«09» ԱՊՐԻԼԻ 2014 Թ. Ն 18-Ա ՀՐԱՄԱՆԻՑ

ՏԻԳՐԱՆ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ

ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 2-րդ մասով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կարգապահական կանոնակարգը հաստատելու մասին» Ն 999-Ն որոշումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2014 թվականի ապրիլի 7-ի «Ծառայողական քննություն նշանակելու մասին» Ն 74-Ա հրամանի համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության կողմից անցկացված ծառայողական քննության արդյունքներով ներկայացված եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ծառայողական դիրքն ի չարը գործադրելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները վերազանցելու համար Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Մալաթիա-Սեբաստիա բաժանմունքի պետ Տիգրան Սուրենի Մալխասյանի նկատմամբ կիրառել **«ծառայությունից ազատում»** կարգապահական տույժը և 2014 թվականի ապրիլի 9-ից նրան ազատել քրեակատարողական ծառայությունից:

2. Կազմակերպել սույն հրամանի իրազեկումը քրեակատարողական ծառայության ողջ անձնակազմին:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ